ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 50

«03» 06 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 39 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի ընդունումը, դրանով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմում համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասի 8-րդ կետով և 21-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանի (այսուհետ՝ Հրաման) հավելվածի 12-րդ կետը լրացնել նոր՝ 7-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«7) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրացման սահմաններում՝

7.1) ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու նպատակով իրականացնում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն.

7.2) ներկայացված նյութերի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված հիմքերի առկայության դեպքում սկսում է ուսումնասիրություն.

7.3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կամ համայնքային, ինչպես նաև պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից պահանջում և ստանում է ուսումնասիրություն իրականացնելու և հայց հարուցելու համար անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ, այդ թվում՝ հարկային կամ մաքսային գաղտնիք համարվող տեղեկություններ, նախնական քննության տվյալներ.

7.4) իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը պարզելու նպատակով օրենքով սահմանված շրջանակներում հանձնարարում է իրականացնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ.

7.5) Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող գույքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով օգտվում է անհրաժեշտ տվյալներ պարունակող առցանց բազաներից և տեղեկատվության տրամադրման խնդրանք ուղարկում օտարերկրյա պետության իրավասու մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով կամ տվյալ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով.

7.6) ուսումնասիրության նախնական արդյունքներով ամփոփագիրը կազմելուց հետո դիմում է ներկայացնում առաջին ատյանի դատարան հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին.

7.7) ուսումնասիրության արդյունքներով դիմում է ներկայացնում առաջին ատյանի դատարան ապացույցների նախնական ապահովում կիրառելու մասին.

7.8) շահագրգիռ անձանց ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություն.

7.9) Օրենքի հիման վրա հարուցում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայց.

7.10) Օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում կնքում է հաշտության համաձայնություն.

7.11) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների համաձայն՝ դատական ակտի վերանայման բողոք նախապատրաստելու և ներկայացնելու նպատակով վերսկսում է ավարտված ուսումնասիրությունը.

7.12) իրականացնում է Օրենքով և այլ օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության գործառույթների փոփոխությունը՝ ստեղծել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն և Հրամանի հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել նոր՝ 1.13-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.13) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն»:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության գործառույթների պատշաճ իրականացումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ստեղծել Հայաստանի Հանրապետության դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանն աջակցող բաժին և Հրամանի հավելվածի 33-րդ կետը լրացնել նոր՝ 23.1-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«23.1) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանն աջակցող բաժին»:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ